

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

Ս. Հրեշտակապետաց եկեղեցին Երուսաղէմի հայոց վանքի շրջափակին մէջ գտնուող փոքր սրբավայր մըն է: Շինուած է Աննա Փաշանայապետի տունին տեղւոյն վրայ, ուր բերուեցաւ Յիսուս առաջին անգամ դատուելու համար ձերբակալութենէ յետոյ: Այստեղ էր որ Յիսուս սպասաւորներէն ապտակուեցաւ յորմէ սրովբէն թեւաւորէր: Կետեաւոր Յիսուսի շարչարանաց հետ կապուած սրբավայր մը եղած է ի սկզբանէ անտի: Յարգ կ'ապրի եկեղեցւոյ հիւսիսային պատին կից ձիթենիի այն ծառը ուր աւանդաբար կ'ըսուի թէ կապուած է Յիսուս նախ քան Ատեան հանուիլը: Այս խոյ պատճառաւ տեղացիներ այս եկեղեցին կը կոչեն «Տէյր էլ-Ձէյթուն», Ձիթենիի վանք:

Արդարեւ Վանքին մէջ փոքրիկ վանք մըն է Հրեշտակապետացը իր ուրոյն տեսչութեամբ և բնակչութեամբ: Այս վանքի կարգ մը մասերն ալ ենթարկուեցան նորոգութեանց:

Ա. — Սոյն եկեղեցւոյ հարաւային պատին մէջ բացուած նախկին իւզատուն կոչուած փոքրիկ խուցը մաքրուեցաւ, ընդարձակուեցաւ և կոկիկ խոտաւարան մատուռի մը վերածուեցաւ: Մատուռը օծուեցաւ բոլորովին ի նորոյ շինուած մարմարեայ սեղանով մը:

Բ. — Եկեղեցւոյ «գանձատուն» կոչուած փոքրիկ աւանդատունին հինցած ձեփերը վար առնուեցան և ի նորոյ ձեփուեցան: Թէ՛ խոտաւարանին և թէ՛ այստեղին համար առաստաղէն մեծկակ լուսամուտներ բացուեցան, առաջին առնելու համար քանդիչ խոնաւութեան Ենփուեցաւ նաեւ եկեղեցիի հարաւային պատի յախճապակներէն վերի մասը:

Գ. — Կարեւորագոյն նորոգութիւնները կատարուեցան եկեղեցւոյ բուն սրբավայրին մէջ որ ծանօթ է Քրիստոսի առաջին բան առնումով: Այս փոքրիկ մատուռը բացուած է եկեղեցւոյ հիւսիսային պատին մէջ, արեւմտեան անկիւնը:

Այս մատուռին արեւելեան պատին մէջ փորուած է բուն սրբավայրի փոքրիկ պատարագամատոյց սեղանը: Սեղանին ներքեւ արդէն մարմարակերտ նորոգուած է 1831 ին:

Այս առթիւ սեղանին երկու կողմերը մարմարէ սիւններ զրուեցան որոնք իրենց վերեւ կը բռնեն կամարակապ մարմարէ խորան մը քանդակազարդուած ողկոյզներով, թռչուններով և հրեշտակներով: Սեղանին նախկին փայտեայ աստիճանները փոխանակուեցան մարմարեայ սալերով: — Մատուռին միւս պատերը և առաստաղը յախճապակներով ծածկուած էին, որոնցմէ ոմանք թափուած և

ուրիշներ՝ խախտած էին: Բոլորն ալ վար առնուեցան և անոնց ետեւ գտնուած աւելորդ և հին ձեփերը մաքրուեցան: Այս մաքրութեան ընթացքին պատերու մէջէն ելան վեց խաչքարեր և խաչքարերու բազմաթիւ կտորներ: Ոմանց արձանագրութիւնները բոլորովին եղծուած էին, ընթեռնելիներէն հնագոյնը կը կրէր Ջոհայկական թուականը (= 1461): Պատին մէջէն կ'երեւին այս մատուռի արտաքին կողքին վրայ գտնուող պատմական ձիթենիի արմատները: Պատերը նորոգուելէ յետոյ վերստին ծածկուեցան նախկին յախճապակներով աւելի կանոնաւոր կերպով: Իսկ պատերուն ներքին մասը շուրջ մէկ մէթը բարձրութեամբ, ինչպէս նաեւ յատակը, ծածկուեցան մարմարով: Խաչքարերէն լմանները զետեղուեցան պատերուն վրայ և նոյն պատերուն վրայ բացուած փոքրիկ պահարաններու մէջ: Կոտորուանքները Մատենադարանի հնագիտական բաժնի փոխադրուեցան: Գրանուածներուն մէջ հետաքրքրական էր հնագրոյմ և անարուեստ փոքրիկ արձանիկ մը, ձեռքի մեծութեամբ, որ կը ներկայացնէր կին մը գրկին մանկիկ մը երկնցած: Եթէ չ'ենթադրենք որ այս արձանիկը կը պատկերէ Ս. Կոյսը և Մանուկ Յիսուսը, պիտի ենթադրենք որ ասիկա կը ներկայացնէ Ուսանանայի քարէի զրոյցը: Այս զրոյցը կապուած է Յիսուսի յաղթական երուսաղէմ մուտքի աւետարանական դէպքին հետ, երբ մարդիկ գիտուս ուղտաններով կ'ընդունին, և փարիսեցիք զիտուցութիւն կ'ընեն Յիսուսին որ սաստեւ աշակերտներուն որ նման օրհնարանութիւններ չ'երեւեն, Յիսուս կը պատասխանէ. «Եթէ զոքա լուսեցեն քաղիքի աղաղակեցեն»: Աւետարանական այս իրողութեան կը յաջորդէ զրոյցը, որ եկած է երկու տարբերակներով: Ըստ մէկին Յիսուսի այս խօսքին վրայ յանկարծ արդարեւ խաչորկեկ քար մը Ուսանանայ կ'աղաղակէ: Այս քարը ցարդ կը ցուցուի Ս. Հրեշտակապետաց եկեղեցիի հիւսիս արեւելեան անկիւնը, որ մարդու բերնին նման բացուածք մը ունի իր վրայ: Իսկ համաձայն զրոյցի միւս տարբերակին, ամուլ կին մը միւս կիներէն վար չ'մտաւ համար, երբ անոնք իրենց փոքրիկները գրկած Յիսուսը զիմաւորելու կ'ելլէին, ինքն ալ քար մը խանձարուրով պատելով գրկը կ'առնէ և Յիսուսը զիմաւորելու կ'ելլէ: Երբ Յիսուս վերոյիշեալ խօսքը կ'արտասանէ հաւատարար այս կնկան գրկի քարը կը վերածուի կենդանի մանկան որ միւս մանուկներու հետ միասին «ուսանանայ» կը պահուայ: Հաւանաբար այս զրոյցին պատկերացումն է փոքրիկ այս արձանիկը որ զետեղուեցաւ նորաշէն խոտովանարանի մուտքին վերեւ, ներսի կողմէն: